ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

գ. Արագածավան 13.01.2026թ

2026 թվականի հունվարի 13-ին՝ ժամը 12:00-ին, ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Արագածավան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ հանրային լսում: Օրակարգում՝ **«ԱՐՑԵՄԵՆՏ»** ՍՊ ընկերության կողմից ցեմենտի արտադրության ընդլայնման նպատակով ՀՀ Արագածոտնի մարզի Արագածավանի ցեմենտի գործարանի ընդլայնման և ցեմենտի արտադրության աշխատանքների վերաբերյալ 1 - ին հանրային լսումը:

Հանրային քննարկման ընթացում, որը տեսաձայնագրվում էր, մուտքի խոսքով հանդես եկավ ՀՀ Թալին համայնքի ղեկավարի տեղակալ՝ Գ. Թադևոսյանը, ապա խոսքը տրամադրվեց **«ԱՐՑԵՄԵՆՏ» ՍՊ** ընկերության ներկայացուցիչ Գ. Հակոբյանին:

Ընկերության ներկայացուցիչ Գ. Հակոբյանը հանգամանալից ներկայացրեց լսումների ու դրա հետագա ՇՄԱԳ փորձաքննական գործընթացի ընթացակարգը: Նա հայտնեց, որ **«ԱՐՑԵՄԵՆՏ» ՍՊ** ընկերությունը դեռևս ԽՍՀՄ տարիներին գործող երկաթ/բետոնե կոնստրուկցիաներ արտադրող գործարանի տարածքում 2024 թվականին կառուցել է ցեմենտի արտադրության արտադրամաս և կազմակերպել է ցեմենտի արտադրություն: Հաշվի առնելով շուկայում ցեմենտի պահանջարկի ավելացումը ընկերությունը ցանկանում է ընդլայնել այդ արտադրամասը, կառուցելով նույն տարածքի ցեմենտի արտադրամասին կից տեղամասում նոր արտադրամաս ավելացնելով ցեմենտի արտադրությունը: Նա նշեց, որ այս հանրային լսումը ցեմենտի արտադրամասի ընդլայնման և ցեմենտի արտադրության նախատեսվող գործունեության աշխատանքների 1-ն լսումն է, որի արդյունքում համայնքը ավագանու որոշմամբ տալիս է նախատեսվող գործունեության իրականացման վերաբերյալ նախնական համաձայնություն: Նա հայտնեց, որ աշխատանքային նախագծով և ՇՄԱԳ հաշվետվությունով ընկերությունը նախատեսելու է համայնքի սոցիալ-տնտեսական ծրագրերին մասնակցելուն հստակ միջոցառումներ և պարտավորություններ: Ցեմենտի արտադրամասի շինարարության փուլում կստեղծվեն 12 նոր աշխատատեղեր, իսկ ցեմենտի գործարանի շահագործման փուլում աշխատակիցների հաստիքացուցակով նախատեսվում է 56 աշխատատեղ, որտեղ կներգրավվեն առավելագույնս ազդակիր համայնքի բնակիչները, ինչը կավելացնի համայնքի բնակիչների զբաղվածությունը, կլուծի նրանց սոցիալական խնդիրները և կնվազեցնի արտագաղթը: Դրանից բացի ներդրումների ժամանակ ցեմենտի արտադրությունը կիրականացվի նոր ժամանակակից տեխնիկայով և սարքավորումներով: Ընկերության ներկայացուցչ Ա Խաչատրյանը հայտնեց, որ գործող արտադրամասի սարքավորումների և փոշու որսման թևքավոր ֆիլտրերի շահագործման փորձից (փոշու արտանետումները հաշվարկայինից ցածր են) ելնելով, ընկերությունը որոշել է ընդլայնման արտադրամասում տեղադրել նույնատիպ սարքավորումներ և թևքավոր ֆիլտրեր: Արագածավան բնակավայրի վարչական ղեկավար Ա. Նազարյանը հայտնեց, որ ցեմենտի արտադրամասը գործում է մոտ երկու տարի, այդ ընթացքում ընկերությունը ակտիվ մասնակցել է համայնքի զարգացման ծրագրերին, բնակիչների սոցիալական խնդիրների լուծմանը և բարեխիղճ կատարել է բոլոր վճարները: Նա հայտնեց, որ Արագածավան բնակավայրի բնակիչները կողմ են արտադրամասի ընդլայնմանը: Ընկերության ներկայացուցիչ Գ. Հակոբյանը նշեց, որ աշխատանքների ընդլայնման արդյունքում ընկերությունը վճարելու է լրացուցիչ պետական տուրքեր, հարկեր և այլ վճարներ ավելացնելով մուտքերը բյուջե: Հաշվի առնելով վերը նշվածը, նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում ընդհանուր առմամբ համայնքը միայն կշահի: Ապագայում 2-րդ լսումների ժամանակ ընկերությունը մանրամասը կանդրադառնա բնապահպանական խնդիրներին և միջոցառումներին:

Ընկերության ներկայացուցիչը պատասխանեց նաև ազդակիր համայնքի ներկայացուցիչների կողմից բարձրացված մի շարք հարցերին: Հարցերը հիմնականում վերաբերվում են հանրային լսումների կարևորությանը, Արագածավան բնակավայրի զարգացմանը, նոր ստեղծվող աշխատատեղերին, ինչպես նաև սոցիալական ծրագրերի ուղղվածությանը և համայնքում ներդրումների իրականացմանը: Ընկերության ներկայացուցիչ Գ. Հակոբյանը պատասխանեց հնչեցրած հարցերին՝ հաստատեց որ իր կողմից պարզաբանված այդ բոլոր հարցերի պատասխանները և լուծումները ներառված կլինեն լիազոր մարմնին ներկայացվող փաթեթում և դրական արդյունքի դեպքում ընկերության կողմից միանշանակ կիրականացվեն:

Եղավ մտքերի փոխանակություն:

Հանրային քննարկումների արդյունքում և հաշվի առնելով լսման մասնակիցների կարծիքները ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի ղեկավարի տեղակալ՝ Գ. Թադևոսյանը հայտնեց համայնքի դրական դիրքորոշումը:

Ազդակիր բնակավայրի լսումների ընթացքում հնչեցրած կարծիքը կքննարկվի և նախնական համաձայնության դեպքում՝ **«ԱՐՑԵՄԵՆՏ»** ՍՊԸ-ի կողմից ներկայացված ՀՀ Արագածոտնի մարզի Արագածավանի ցեմենտի գործարանի ընդլայնման և ցեմենտի արտադրության աշխատանքների վերաբերյալ ավագանու որոշման արդյունքում կտրվի նախնական համաձայնություն:

Թալին համայնքի ղեկավարի տեղակալ՝ **Գ. Թադևոսյան**

Արագածավան բնակավայրի վարչական ղեկավար՝ **Ա. Նազարյան**

«ԱՐՑԵՄԵՆՏ» ՍՊ ընկերության տնօրեն՝ **Լ. Գրիգորյան**

Հանրային լսման արձանագրող՝ **Թ. Խաչատրյան**